

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողովի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) նպատակն է սահմանել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման կարգը, Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջները, նիստերի գումարման, դրանց մասնակցության կարգը, Հանձնաժողովի գործունեությունը, պատասխանատվության ոլորտները և Հանձնաժողովի նախագահի պատասխանատվության շրջանակը:

Սույն կանոնադրությունը կիրառվում է Բանկի խորհրդի, Հանձնաժողովի նախագահի, անդամների և քարտուղարի կողմից:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Հանձնաժողովին է պատվիրակել ռիսկերի հետ կապված հարցերի, ինչպես նաև Բանկի և իր դուստր ու կախյալ ընկերությունների (այսուհետ միասին՝ Խումբ) վրա ազդող ռիսկերի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգերի (բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի) նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթը:

ԳԼՈՒԽ 2. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

- 2.1. Հանձնաժողովը (ներառյալ՝ Նախագահը) պետք է բաղկացած լինի առնվազն երեք անդամից:
- 2.2. Հանձնաժողովի նախագահը պետք է նշանակվի Խորհրդի կողմից Խորհրդի անկախ անդամների կազմից:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ

- 3.1. Հանձնաժողովի նիստերին մասնակցելու իրավունք ունեն միայն Հանձնաժողովի անդամները:
- 3.2. Հանձնաժողովի նախագահի հրավերով ցանկացած անձ կարող է մասնակցել ամբողջ նիստին կամ դրա մի մասին:
- 3.3. Ակնկալվում է, որ Հանձնաժողովի անդամները, հնարավորության դեպքում, Հանձնաժողովի նիստերին կմասնակցեն առկա, սակայն կարող են մասնակցել նաև հեռախոսակապի կամ տեսազանգի միջոցով:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՔՎՈՐՈՒՄԸ

- 4.1. Հանձնաժողովի նիստերը գումարվում են բավարար ժամանակ առաջ ծանուցվելու պայմանով, Հանձնաժողովի կողմից որոշված հաճախականությամբ և ժամանակահատվածում:
- 4.2. Նիստերի քվորումը առկա է երկու անդամի, ներառյալ՝ նախագահի (կամ Հանձնաժողովի անդամներից ընտրված՝ վերջինիս պատվիրակի) մասնակցության դեպքում:
- 4.3. Հանձնաժողովի քարտուղարը Բանկի կորպորատիվ քարտուղարն է (կամ վերջինիս պատվիրակը):

ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

5.1. Նախագահից պահանջվում է.

- 1) խթանել բաց, ակտիվ և, անհրաժեշտության դեպքում, մարտահրավերներ պարունակող քննարկումներ,

2) ապահովել, որ Հանձնաժողովը ունենա իր առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվություն և բավարար ուշադրություն հատկացնի իր իրավասության ներքո գտնվող հարցերին,

3) նպաստել Հանձնաժողովի գործունեությանը՝ գործադիր որոշումների անկախ վերահսկողության ապահովմանը աջակցելու միջոցով,

4) ապահովել ռիսկերի գործառույթի և համապատասխանության գործառույթի անկախությունը և հսկել վերջիններիս պարտականությունների կատարումը,

5) Խորհրդին զեկուցել Հանձնաժողովի գործունեության մասին:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

6.1. Հանձնաժողովի պատասխանատվության ոլորտը ներառում է.

1) Ռիսկի ախորժակ.

ա. Խորհրդին տրամադրել խորհրդատվություն ռիսկի ախորժակին և ռիսկի ընդունելի մակարդակին առնչվող հարցերի վերաբերյալ.

բ. դիտարկել և յուրաքանչյուր տարի Խորհրդի հաստատմանը ներկայացնել Ռիսկի ախորժակի համընդհանուր կանոնակարգումը.

գ. դիտարկել և յուրաքանչյուր տարի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առավել հաճախ, Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի և Խմբի Ռիսկի ախորժակի հայտարարությունը.

դ. ստանալ հաշվետվություններ և անհրաժեշտության դեպքում ստանալ արտաքին խորհրդատվություն՝ համոզվելու համար, որ Բանկի և Խմբի մոտեցումը իր ռիսկի ախորժակի սահմանմանը համապատասխանում է Կենտրոնական բանկի պահանջներին.

ե. համոզվել, որ ռիսկի ախորժակը արտացոլում է Բանկի և Խմբի ռազմավարության բոլոր ապեկտները (ներառյալ՝ տեխնոլոգիաների ռազմավարությունը).

զ. դիտարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Կենտրոնական բանկին ներկայացման ենթակա Բանկի վերականգնման ծրագիրը՝ համոզված լինելով, որ այն ամբողջական է և համահունչ է Բանկի ռիսկի ախորժակի սկզբունքներին.

է. դիտարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացը.

ը. դիտարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի անհատական իրացվելիության գնահատման գործընթացը.

թ. դիտարկել և, անհրաժեշտության դեպքում, Խորհրդին տրամադրել խորհրդատվություն խոշոր գործարքների և/կամ Բանկի խոշոր ծրագրերի վերաբերյալ՝ հատկապես ուշադրություն դարձնելով Բանկի և Խմբի ռիսկի ախորժակի և ռիսկի հանդուրժողականության վրա հնարավոր ազդեցություններին.

ժ. դիտարկել և Խորհրդին տրամադրել խորհրդատվություն Բանկի և Խմբի գործառնական և SS գործընթացների անընդհատությանն առնչվող ռիսկերի կառավարման արդյունավետության վերաբերյալ, ներառյալ՝ Խմբի և/կամ Բանկի հաստատված ռազմավարության՝ տեխնոլոգիաներին վերաբերող դրույթների կատարման, կիբերանվտանգության և տեղեկատվական անվտանգության ոլորտում լուրջ լայնածավալ կազմակերպված հանցագործության հետ կապված ռիսկերի վերաբերյալ.

ժա. դիտարկել և Խորհրդին և/կամ Կառավարման, նշանակումների և վարձատրության հանձնաժողովին տրամադրել խորհրդատվություն վարձատրության, մի կողմից, և ռիսկերի ախորժակի ու վարվելակերպի, մյուս կողմից, համահունչ լինելու վերաբերյալ.

ժբ. յուրաքանչյուր տարի դիտարկել և Խորհրդին տրամադրել խորհրդատվություն Բանկի կապիտալի արժեքի վերաբերյալ:

2) Ռիսկերի հետ կապված հարցեր.

ա. հսկել և Խորհրդին տրամադրել խորհրդատվություն ռիսկերին առնչվող հարցերի վերաբերյալ (ներառյալ՝ Խորհրդին ներկայացվող և ռիսկերին վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ), որոնց մեջ մտնում են ինչպես ֆինանսական ռիսկերը (ներառյալ՝ կապիտալի և իրացվելիության ռիսկերը, մանրածախ և մեծածախ վարկային ռիսկերը, ռազմավարական ռիսկը և շուկայական

ռիսկը), այնպես էլ ոչ ֆինանսական ռիսկերը (ներառյալ՝ գործառնական ռիսկերը, արտակարգ իրավիճակների ռիսկերը (ներառյալ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, կիրառված տեխնոլոգիաների և երրորդ անձանց հետ կապված ռիսկերը), ֆինանսական հանցագործության և զեղծարարության ռիսկերը, կիրառելի կարգավորումներին համապատասխանելու ռիսկը, մարդկանց հետ կապված ռիսկը, իրավական ռիսկը, մոդելային ռիսկը և ֆինանսական հաշվետվողականության և հարկային ռիսկը)։

բ. դիտարկել և մարտահրավերներ պարունակող հարցադրումներ ներկայացնել ռիսկերի կառավարման հաշվետվությունների, ներառյալ՝ Բանկի և Խմբի կազմակերպության ռիսկերի հաշվետվությունների վերաբերյալ, որպեսզի.

1) Հանձնաժողովը կարողանա գնահատել Բանկի և Խմբի ռիսկի պրոֆիլը և այն, թե ինչպես է ղեկավարությունը հսկում, մշտադիտարկում և մեղմացնում Բանկի և Խմբի՝ ձեռնարկատիրական գործունեությունից առաջացող ռիսկերը,

2) հնարավոր լինի հստակ կենտրոնանալ ներկա և ակնկալվող ապագա ռիսկերի վրա, որպեսզի Հանձնաժողովը կարողանա գնահատել Բանկի և Խմբի խոցելիությունը և հնարավոր ռիսկերին դիմակայելու ունակությունը,

3) գնահատվի Բանկի և Խմբի վարվելակերպի կանոնների արդյունավետությունը, որոնք կոչված են ապահովելու հաճախորդների համար արդար արդյունքներ, ապահովելու ֆինանսական շուկաների կանոնավոր և թափանցիկ աշխատանքը, ինչպես նաև պաշտպանել Բանկին և Խմբին Բանկի և Խմբի ֆինանսական և ոչ ֆինանսական վիճակի և հեռանկարների վրա բացասական ազդեցություն ունեցող հանգամանքներից (ներառյալ՝ գործարար համբավին պատճառված վնասից),

4) Հանձնաժողովը կարողանա Խորհրդին տրամադրել հավելյալ երաշխիքներ, որոնք Խորհուրդը կարող է պահանջել ռիսկերի մասին իրեն ներկայացված տեղեկատվության վերաբերյալ,

5) Հանձնաժողովը կարողանա գնահատել Բանկի և Խմբի՝ ներքին հսկողության և գործընթացների ներքին կարգավորումները, որոնք կոչված են հայտնաբերելու այն ոլորտները, որտեղ Բանկը կարող է դառնալ և դրա արդյունքում ֆինանսական համակարգը, ավելի լայն վերցրած, կարող է դառնալ ֆինանսական հանցագործության կամ համակարգային չարաշահման զոհ,

գ. իրականացնել ապագային միտված թեմատիկ ստուգումներ և մանրակրկիտ ուսումնասիրություններ, որպեսզի պատշաճ կերպով դիտարկվեն և որոշումներ ընդունվեն հիմնարար ռիսկերի և Կենտրոնական բանկի կարգավորումներին և պահանջներին համապատասխանելու առնչությամբ ծագող մտահոգությունների վերաբերյալ.

3) Սթրես-թեստավորում.

ա. դիտարկել, մարտահրավերներ պարունակող հարցադրումների ենթարկել և, անհրաժեշտության դեպքում, հավանության արժանացնել սահմանված հիմնարար ենթադրությունները, խոցելիությունները և սցենարների թեմաները, ինչպես նաև ընդլայնված չափումները, որոնք կկիրառվեն ինչպես ներքին, այնպես էլ Կենտրոնական բանկի պահանջով Բանկի և Խմբի մակարդակում իրականացվող սթրես-թեստերի շրջանակներում, և Կենտրոնական բանկին ներկայացվող փաստաթղթերը.

բ. դիտարկել և հաստատել ինչպես ներքին, այնպես էլ Կենտրոնական բանկի պահանջով Բանկի և Խմբի մակարդակում իրականացվող սթրես-թեստերը, ներառյալ՝ Կենտրոնական բանկին ներկայացվող փաստաթղթերը.

գ. դիտարկել և համոզվել, որ Բանկի և Խմբի սթրես-թեստավորման կանոնակարգումը, կառավարումը և առնչվող ներքին հսկողության համակարգերը գործուն են.

4) Ռիսկերի կառավարման կանոնակարգում և ներքին հսկողության համակարգեր.

ա. յուրաքանչյուր տարի դիտարկել Բանկի և Խմբի ռիսկերի կառավարման վերաբերյալ ներքին կարգավորումները և հաշվի առնել Բանկի ներքին աուդիտի բաժնի կողմից ներկայացված հաշվետվությունը այդ կարգավորումների՝ ամբողջ Բանկում և Խմբում արդյունավետ գործելու վերաբերյալ.

բ. գնահատել, թե ինչ արդյունավետությամբ է ղեկավարությունը ներդնում և մշտապես ապահովում ռիսկերի կառավարման արդյունավետ մշակույթ և գործուն ներքին հսկողության միջավայր,

որը կոչված է խթանելու համապատասխանությունը Բանկի և Խմբի քաղաքականություններին և համապատասխանության պահանջներին.

գ. իր հսկողական դերը իրականացնելիս Հանձնաժողովը պետք է.

1) դիտարկի Կենտրոնական բանկի էական բացահայտումները ռիսկերի կառավարման, բիզնեսի իրականացման, ռիսկերի գնահատման կամ կառավարման գործընթացների վերաբերյալ,

2) դիտարկի Բանկի և Խմբի ներքին հսկողության համակարգերը, որոնք վերաբերում են համապատասխանության ռիսկերին և համոզվի, որ դրանք բավարար են, և որ Բանկը և Խումբը պահպանում են պատշաճ հարաբերություններ Կենտրոնական բանկի հետ,

3) դիտարկի ներքին հսկողության համակարգերը համոզվելու համար, որ դրանք արդյունավետ են (Աուդիտի հանձնաժողովը պետք է ունենա առաջնային պատասխանատվություն ներքին ֆինանսական հսկողության համակարգերի համար),

4) հաշվի առնի ղեկավարության և ներքին հսկողության համակարգերի հաշվետվությունները,

5) ստանա ներքին աուդիտի հաշվետվությունները Բանկի և Խմբի ներքին հսկողության համակարգերի գործընթացների վերաբերյալ,

6) զեկուցի Խորհրդին ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգերի արդյունավետության վերաբերյալ, բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի, որն Աուդիտի հանձնաժողովի պատասխանատվությունն է,

դ. հսկել իրազեկիչի («whistleblower») մտահոգությունները հաշվի առնելուն և դրանց պատասխանելուն ուղղված Բանկի քաղաքականությունները և գործընթացները.

5) **Տարեկան հաշվետվություն.**

ա. դիտարկել և հավանության արժանացնել տարեկան հաշվետվություններում Հանձնաժողովի հաշվետվության բովանդակությունը: Հանձնաժողովի հաշվետվության վերաբերյալ առաջարկը Խորհրդին ներկայացնելիս Հանձնաժողովը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ հանգամանքներին.

1) Բանկի և Խմբի ռիսկերի վերաբերյալ բացահայտումներին, ներառյալ՝ Խմբի ռազմավարության ձևակերպմանը ռիսկերի կառավարման համատեքստում, ինչպես նաև ռիսկերին, որոնց Խումբը ենթարկվում է ռազմավարության հետևանքով, կիրառելի ռիսկի ախտորոշակին, ռիսկի հանդուրժողականությանը և այն հանգամանքին, թե ինչպես է ժամանակի ընթացքում գնահատվում իրական ռիսկի ախտորոշակը,

2) ապագային միտված տեղեկատվությանը, որը մատնանշում է Բանկի և Խմբի առջև ծառայած ռիսկերի սպասվող ազդեցությունը,

3) ձևակերպմանը, թե ինչպես է Բանկում և Խմբում ռիսկը կառավարվում և Հանձնաժողովի դերին հսկողություն իրականացնելու հարցում,

բ. դիտարկել և հավանության արժանացնել ներքին հսկողության համակարգերին (բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի) և դրանց կենսունակությանը վերաբերող հայտարարությունները, ներառյալ՝ Խմբի և Բանկի առջև ծառայած հիմնարար ռիսկերի գնահատականը, որոնք ներառված են Խորհրդին ներկայացման ենթակա տարեկան հաշվետվությունում.

6) **Ռիսկերի և համապատասխանության գործառույթի ղեկավար.**

ա. Հանձնաժողովը պետք է մշտադիտարկի Ռիսկերի և համապատասխանության գործառույթի ղեկավարի (այսուհետ՝ ՌՀ ղեկավար) արդյունավետությունը և անկախությունը և գնահատի ռիսկերի կառավարման գործառույթի կազմը և արդյունավետությունը, ներառյալ այն, որ գործառույթն ունենա բավարար դիրք, բիզնեսից անկախություն և բավարար ռեսուրսներ (որակավորումներ, փորձ և անձնակազմի վերապատրաստումներ).

բ. Հանձնաժողովը պետք է ապահովի, որ ՌՀ ղեկավարը.

1) մասնակցի ռիսկերի կառավարմանը և հսկողությանն ամբողջ ընկերության մակարդակում,

- 2) բավարար չափով համոզված լինի, որ բիզնես գծերում ռիսկերի «տիրապետողները» ծանոթ են Բանկի և Խմբի ռիսկի ախորժակին և գործում են դրան համապատասխան,
- 3) ունենա անմիջական հասանելիություն Հանձնաժողովի նախագահին,
- 4) բացի ներքին կառուցվածքի շրջանակներում Գլխավոր գործադիր տնօրենին հաշվետու լինելուց, հաշվետու լինի նաև Հանձնաժողովին,
- 5) լինի անկախ առանձին բիզնես միավորներից,

գ. Հանձնաժողովը պետք է Խորհրդին տրամադրի կարծիք ՌՀ ղեկավարի նշանակման և լիազորությունների դադարեցման վերաբերյալ.

դ. յուրաքանչյուր տարի վերանայել ՌՀ ղեկավարի կատարողականը և նրա վարձատրության վերաբերյալ առաջարկներ ներկայացնել Կառավարման, նշանակումների և վարձատրության հանձնաժողովին և/կամ Խորհրդին

7) Ներքին աուդիտ.

ա. դիտարկել ներքին աուդիտի հաշվետվությունները, որոնք առնչվում են Հանձնաժողովի նպատակներին և պատասխանատվության շրջանակին.

բ. պատասխանել Աուդիտի հանձնաժողովի կողմից իրեն ներկայացված և ներքին աուդիտին վերաբերող այլ հարցերի.

գ. ապահովել, որ Աուդիտի հանձնաժողովը լինի տեղեկացված Հանձնաժողովի այն աշխատանքների վերաբերյալ, որոնք առնչվում են ներքին աուդիտի հաշվետվություններին և մասնավորապես, ցանկացած թերության վերաբերյալ, որը ընկալվել է ներքին աուդիտի աշխատանքների շրջանակի կամ պատշաճության վերաբերյալ.

8) **Արտաքին աուդիտորներ՝** դիտարկել և հետևողական լինել ցանկացած խնդրի լուծման հարցում, որը բարձրացվել է արտաքին աուդիտորի կողմից Բանկի կամ Խմբի տարեկան հաշվետվության և այլ հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ, և որն առնչվում է ռիսկերի կառավարմանը կամ ներքին հսկողության համակարգերին (բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի).

9) Այլ պարտականություններ՝

ա. հաշվի առնել, թե արդյոք անհրաժեշտ է ստանալ ռիսկերի վերաբերյալ արտաքին խորհրդատվությունը, մասնավորապես Հանձնաժողովի և ռիսկերի կառավարման գործառույթի կողմից կատարված վերլուծությունը և գնահատականները փորձարկելու նպատակով: Այն դեպքում, երբ այդպիսի խորհրդատվությունն անհրաժեշտ է, Հանձնաժողովը Խորհրդի կողմից լիազորված է ստանալ այդպիսի արտաքին մասնագիտական խորհրդատվություն.

բ. կատարել այլ պարտականություններ, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ Խորհրդի կողմից իր վրա դրվել:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Հանձնաժողովը.

1) պետք է տարեկան առնվազն երկու անգամ հանդիպի Բանկի ներքին աուդիտի ղեկավարի հետ,

2) պետք է տարեկան մեկ անգամ հանդիպի արտաքին աուդիտորի հետ,

3) պետք է տարեկան առնվազն երկու անգամ հանդիպի ՌՀ ղեկավարի հետ՝ առանց ղեկավարության ներկայության,

4) պետք է պարբերաբար վերանայի սույն կանոնադրությունը և իր արդյունավետությունը, ինչպես նաև ստացվող տեղեկատվության որակը և առաջարկություններ ներկայացնի ցանկացած անհրաժեշտ փոփոխության մասին,

5) պետք է Խորհրդին զեկուցի սույն կանոնադրությունում նշված հարցերի մասին, այն մասին, թե Հանձնաժողովը ինչպես է կատարել իր պարտականությունները, և ներկայացնի առաջարկություններ մտահոգությունները լուծելու կամ բարելավումների համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ,

6) կարող է Բանկի դուստր և կախյալ ընկերություններից պահանջել ցանկացած տեղեկատվու-

թյուն, որը նպատակահարմար է համարում,

7) Խորհրդի կողմից լիազորված է ներգրավել հատուկ խորհրդատուների, փորձագետների կամ այլ խորհրդատուների և օգտվել այնպիսի ռեսուրսներից (ներառյալ՝ աշխատակիցները), որոնք Հանձնաժողովը կարող է նպատակահարմար համարել,

8) պետք է հաշվի առնի կիրառելի օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը,

9) անհրաժեշտության դեպքում պետք է աշխատի և համագործակցի Խորհրդին կից այլ հանձնաժողովների հետ (այդ թվում՝ որոշի, թե որտեղ կա պարտավորությունների համընկնում կամ բաց): Հնարավորության դեպքում՝ Հանձնաժողովի փոխգործակցությունը Խմբի անդամ կազմակերպությունների խորհուրդների և խորհրդին կից հանձնաժողովների հետ կարտացոլվի Խորհրդի մանրամասն պլաններում և գործընթացներում, որոնք մշակվում են շարունակական հիմունքներով յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 8. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում 2022 թվականի նոյեմբերի 11-ից: